

Հարգելի՛ մասնակիցներ,

Պատիվ ունենք հրավիրելու ձեզ մասնակցելու քիմիայի տարբեր բնագավառներն ընդգրկող, իր տեսակի մեջ եզակի թվով երկրորդ «Քիմիայի սահմանները, Հայաստան» /ArmChemFront/ միջազգային անգլալեզու գիտաժողովին, որը հնարավորություն է ընձեռում հանդիպելու աշխարհի առաջատար քիմիկոսներին, այդ թվում նաև՝ երկու Նոբելյան մրցանակակիրի:

ArmChemFront 2018-ը տեղի է ունենալու **ս.թ. հոկտեմբերի 21-25-ը**, Անի Պլագա հյուրանոցում, **ք. Երևան**: Ակնկալում ենք քիմիայի ոլորտի մասնագետների, ուսանողների մասնակցությունը:

Հայկական կողմի մասնակցությունը խթանելու նպատակով գիտաժողովի շրջանակներում կազմակերպվող դասախոսությունները, պատաստային ձևաչափով ներկայացումները, ինչպես նաև սուրճի և ճաշի ընդմիջումները հայաստանաբնակ մասնակիցների համար միանգամայն անվճար են: Միայն հոկտեմբերի 25-ին կայանալիք գիտաժողովի գալա ընթրիքին մասնակցության պարագայում **քոլոր** ներկաները վճարում են 18.000 ՀՀ դրամ: Ցանկանում ենք տեղեկացնել նաև, որ գիտաժողովի շրջանակներում կազմակերպվող միջոցառումները՝ մասնավորապես այցելությունները Մատենադարան (հոկտեմբերի 21), ինչպես նաև Գառնու տաճար ու Գեղարդի վանք կամ Էջմիածնի Մայր Տաճար և Չվարթնոց (հոկտեմբերի 24), նախատեսված են միայն օտարերկրյա հյուրերի համար:

Մասնակցության հավաստագրեր կստանան միայն այն անձիք, ովքեր ներկա կգտնվեն գիտաժողովի ամբողջական ծրագրին:

Տեղեկացնում ենք նաև, որ բոլոր դասախոսությունների ընթացքում անգլերենից հայերեն համաժամանակյա թարգմանությունն ապահովվելու է պրոֆեսիոնալ թարգմանիչների կողմից:

Կոնֆերանսի շրջանակներում **ս.թ. հոկտեմբերի 25-ին** կազմակերպվելու է նաև հատուկ ճաշ-քննարկում հայաստանաբնակ ուսանողների համար, ովքեր ցանկանում են շփվել և իրենց հետաքրքրող թեմաները բարձրաձայնել հրավիրված գիտնականների/բանախոսների հետ:

Գիտաժողովին գրանցվելու համար խնդրում ենք ներբեռնել դիմում-հայտը, լրացնել այն անգլերեն լեզվով և ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ **contact@armchemfront.com** Մասնակիցների գրանցման տվյալները ստանալուց մի քանի օր անց մասնակիցն էլեկտրոնային փոստով անգլերեն լեզվով ծանուցում կստանա դասախոսությունների կամ պատաստային ձևաչափով ներկայացումների անոտացիայի վերաբերյալ՝ մեր կայքէջի համապատասխան հղումով, որտեղ կարող է գտնել անոտացիան ուղարկելու համար անհրաժեշտ բոլոր ձևանմուշները /templates/:

Լրացուցիչ հարցերի դեպքում կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝

+374 11 621 000 - Արմինե Գաբրիելյան (ԵՊԲՀ զարգացման բաժին)

+374 98 091 135 – Աննա Մկրտչյան (ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտ)

Արտերկրում սովորող հայ ուսանողների մասնակցության վճարի գեղչերի առնչությամբ խնդրում ենք գրել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ contact@armchemfront.com

Գրանցվելուց հետո մասնակիցը կարող է ուղարկել իր գիտական աշխատանքի անոտացիան, որը պետք է ներկայացվի գիտաժողովի ընթացքում դասախոսության կամ պատաստային ձևաչափով: